

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ



## ՎԱՐՂԱՆ ԲՈՍՏԱՆՁՅԱՆ

ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսոր,  
տնտեսագիտության դոկտոր

## ԳԵՎՈՐԳ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու

## ՄԱՐԻԱՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի  
փորձագետ, տնտեսագիտության թեկնածու

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ\*

Հոդվածը նվիրված է Հայաստանում բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրներին: Աշխատանքում ուսումնասիրվել են բյուջետային գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները, վերլուծվել սոցիալ-տնտեսական զարգացման գերակա նպատակները, ինչպես նաև գնահատվել դրանց իրագործմանն ուղղված բյուջետային հատկացումների արդյունավետ օգտագործման հիմնահարցերը: Բացահայտվել են բյուջետային ծախսերի արդյունավետության վրա բացասաբար ազդող գործոնները և առաջարկվել են դրանց հաղթահարմանն ուղղված առաջարկությունները կարող են օգտագործվել բյուջետային գործընթացի իրականացման և բյուջետային հայտերի կազմման ժամանակ:

\* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 15T-5B103 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

**Հիմնաբառեր.** բյուջետային համակարգ, բյուջետային գործընթաց, բյուջետային ծախսեր, ծրագրային բյուջետավորում, բյուջետային ծախսերի արդյունավետություն, գերակա նպատակներ, բյուջետավորում ըստ վերջնական արդյունքների

JEL: H50, H59, H61, H69, H72

Ազատ տնտեսական հարաբերություններին անցման կուրս որդեգրելուց հետո Հայաստանի Հանրապետությունում իրականացվեցին մի շարք վերափոխումներ շուկայական սկզբունքների վրա խարսխված բյուջետային համակարգ կառուցելու ուղղությամբ: Իրականացված բարեփոխումների արդյունքում հանրապետությունում ձևավորված բյուջետային համակարգը, ընդհանուր առմամբ, բավարարելով պետական ֆինանսների կառավարման ժամանակակից պահանջները, միաժամանակ ուղեկցվեց շուկայական հարաբերությունների կարգավորման համար կարևոր նշանակություն ունեցող այնպիսի լուծումներով, ինչպիսիք են.

- բյուջետային իրավահարաբերությունները կարգավորող ամբողջական համակարգի ձևավորումը, բյուջետային համակարգի միասնական սկզբունքների և բյուջետային գործընթացի մասնակիցների իրավասությունների ու պարտականությունների սահմանումը,
- բյուջեի կատարման գանձապետական համակարգի ձևավորումը, բյուջետային հաշվառման և վերահսկողության համապատասխան մեխանիզմների ստեղծումը, ինչպես նաև տվյալ գործընթացի թափանցիկության ապահովումը,
- միջնաժամկետ բյուջետային պլանավորման համակարգի ներդրումը և բյուջետային գործընթացի հետ դրա փոխկապակցումը,
- ծրագրային բյուջետավորման հիմքերի ձևավորումը, պետական գնումների համակարգի կատարելագործումը:

Հարկ է սակայն նշել, որ, դրանով հանդերձ, պետական ֆինանսների կառավարման ասպարեզում դեռևս առկա են որոշ համակարգային բացեր, որոնցից առավել հատկանշականներն են բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման մեթոդաբանության անկատարությունը, ծախսերի կառուցվածքի և պետական քաղաքականության նպատակների թույլ փոխկապակցվածությունը, պետական կառավարման մարմինների համար բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման խթանների բացակայությունը և այլն:

Բյուջետային ծախսերի կառավարման համակարգի կատարելագործման հիմնական նպատակը դրանց արդյունավետության մակարդակի բարձրացման ինստիտուցիոնալ, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերի ձևավորումն է: Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

- ծախսերի արդյունավետության գնահատման համապատասխան օբյեկտների ընտրություն, ինչպիսիք կարող են լինել որոշակի հասարակական բարիքների նկատմամբ բնակչության պահանջարկի բավարարմանն ուղղված ծրագրերը, մատուցվող ծառայությունները և պետական գործառույթների այլ բաղադրիչներ,
- ծախսերի արդյունավետության գնահատման հավաստի և ոչ ծախսատար տեղեկատվության առկայություն,

- ծախսերի արդյունավետության գնահատման մեթոդական հիմքերի ձևավորում և համապատասխան մոտեցումների ու մեխանիզմների մշակում:

Բյուջետային ծախսերի արդյունավետությունն, ընդհանուր առմամբ, որոշվում է պետության և բյուջետային ֆինանսավորում ստացող կազմակերպությունների գործունեության արդյունավետությամբ, արտադրողականությամբ և խնայողականությամբ: Ընդ որում, այդ գործունեությունը կարող է դրսևորվել համապատասխան գործառնությունների, ծրագրերի, միջոցառումների իրականացման, ինչպես նաև ծառայությունների մատուցման միջոցով, որոնց արդյունքում, վերջին հաշվով, բավարարվում են հասարակական որոշակի պահանջումները: Հարկ է սակայն նշել, որ տնտեսական զարգացման ներկա փուլում բյուջետային ծախսերի արդյունավետությունը չի գնահատվում այս տեսանկյունից. դրանք չեն պլանավորվում ըստ գործունեության արդյունքների: Հետևաբար՝ կարևոր է դառնում այնպիսի մեխանիզմի մշակումը, որը թույլ կտա բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատումն իրականացնել՝ ելնելով ստացված արդյունքներից: Դրա համար, մեր կարծիքով, այդ գործընթացը պետք է դիտարկել որպես բյուջետային ծառայություն, թեև իրավական տեսանկյունից դեռևս որոշակիացված չէ «բյուջետային ծառայություն» հասկացության սահմանումը: Անկախ այդ հանգամանքից, տարբեր կառույցների կողմից օգտագործվում է տվյալ հասկացությունը, և դա, ըստ էության, ընկալվում է որպես բյուջետային ֆինանսավորում ստացող կազմակերպությունների օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասությունների շրջանակներում գործունեություն՝ ուղղված հասարակության պահանջումներին բավարարմանը: Բյուջետային ծառայության մատուցումը գործունեություն է, որն ունի նպատակաուղղված բնույթ և որոշակի սոցիալ-տնտեսական նշանակություն: Բացի այդ, գոյություն ունեն նպատակային խմբեր, որոնք այդ ծառայությունների սպառողներն են, և նման ծառայությունների ստացումն երաշխավորված է երկրի սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով: Յուրաքանչյուր բյուջետային ծառայություն բնութագրվում է դրա մատուցման եղանակների համախմբով, որը որոշակիացվում է այդ նպատակով կիրառվող գործիքների ամբողջությամբ և պայմանավորված է վարվող հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությամբ<sup>1</sup>:

Բյուջետային ծառայությունը, ուղղված լինելով հասարակական պահանջումներին բավարարմանը, բնականաբար, պետք է իրականացվի առավելագույն արդյունավետությամբ: Վերջինս պայմանավորված է ծախսերի խնայողականությամբ, երբ վերջնական արդյունքների ձեռքբերումը կամ բյուջետային ծառայությունների մատուցումն իրականացվում է նվազագույն ծախսերով: Ակնհայտ է, որ ծառայության մատուցումը ենթադրում է որոշակի ռեսուրսների խնայողաբար օգտագործում, երբ մեկ միավոր ռեսուրսի փաստացի արժեքն ավելի փոքր է պլանայինից կամ էլ ավելի փոքր, քան համանման ծառայության մատուցման համար այլ կազմակերպությունների կողմից օգտագործվող համանման ռեսուրսի արժեքը: Գործունեության խնայողականության կարելի է հասնել ապրանքների և ծառայությունների՝ մրցութային եղանակով և առավել ցածր գնով ձեռքբերման, իսկ արտադրողականության՝

<sup>1</sup> Տե՛ս Վ. Բոստանջյան, Գ. Կիրակոսյան, Ա. Սաֆարյան, Հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2014:

միավոր ռեսուրսի հաշվին կատարվող աշխատանքի ծավալի ավելացման ճանապարհով բյուջետային ծախսերի կրճատման միջոցով:

Բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման և բյուջետային ծառայությունների համադրելիության ապահովման համար անհրաժեշտ է մշակել և կիրառել խնայողականության, արտադրողականության և արդյունավետության չափորոշիչներ: Դրանք պետք է հաշվի առնեն բյուջետային ծառայության առաջնահերթությունը, զարգացման ռազմավարական գերակայություններին համապատասխանությունը, ինչպես նաև կիրառվող յուրաքանչյուր չափորոշիչի ազդեցության աստիճանը ծախսերի ընդհանուր արդյունավետության վրա: Դա թույլ կտա համադրել բյուջետային տարբեր ծառայությունների արդյունքները և իրականացնել համեմատական վերլուծություններ: Չափորոշիչների յուրաքանչյուր տեսակի համար պետք է մշակել համապատասխան սանդղակ, համաձայն որի կորոշվի ծախսերի արդյունավետության մակարդակը:

Բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ է.

- մշակել բյուջետային ծառայությունների մատուցման և այդ նպատակով բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության չափորոշիչների ու ցուցանիշների որոշման և մշտադիտարկման մեթոդաբանություն,
- մշակել արդյունավետության ցուցանիշների հիման վրա բյուջետային հայտերի և հաշվետվությունների կազմման փաստաթղթեր,
- ստեղծել բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման և վերահսկման մեխանիզմների կիրառման օրենսդրաիրավական հիմքեր,
- ներդնել բյուջետային ծառայությունների մատուցման արդյունավետության ցուցանիշների նպատակային նշանակության որոշման, հաստատման և համաձայնեցման ընթացակարգեր,
- սահմանել խրախուսման համապատասխան ձևեր՝ առաջադրված արդյունքներին հասնելու և բյուջետային հատկացումները նպատակային օգտագործման համար,
- սահմանել պատասխանատվություն բյուջետային ծառայությունների մատուցումը ձախողելու և բյուջետային միջոցները ոչ արդյունավետ օգտագործելու համար:

Նշված առաջարկությունների գործնական ներդրումը պահանջում է օրենսդրությունում կատարել համապատասխան փոփոխություններ, որոնք կսահմանեն բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման ցուցանիշների ներառումը բյուջետային գործընթացում և, մասնավորապես, կենթադրեն բյուջետային ծառայությունների մատուցման պլանավորում, ակնկալվող արդյունքների հիման վրա համապատասխան ֆինանսավորում և բյուջետային հաշվետվությունների ներկայացում, ծախսերի և բյուջետային ծառայությունների մատուցման արդյունավետության նկատմամբ վերահսկողության իրականացում և այլն:

Բյուջետային ծախսերի արդյունավետության ապահովման գործում պետք է խիստ կարևորել դրա գնահատման նպատակով օգտագործվող ցուցանիշների և չափորոշիչների մշակման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաստիությունը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ

ներկայումս տարբեր ճյուղերի և ոլորտների գործունեությունը բնութագրող ցուցանիշները թույլ չեն տալիս իրատեսորեն գնահատել կառավարման և բյուջետային ծառայությունների մատուցման որակը: Այդ առումով, պետք է առանձնացնել այն խնդիրները, որոնց լուծումը էական նշանակություն կունենա բյուջետային ծառայությունների որակի բարձրացման համար<sup>2</sup>: Այդպիսի խնդիրներից, թերևս, պետք է առանձնացնել տեղեկատվության անհրաժեշտության և դրա ստացման պահերի միջև ժամանակային լագի առկայությունը: Խնդիրն այն է, որ երբեմն բավականաչափ բարդ է բյուջետային ծառայությունների մատուցման վերջնական արդյունքի վերաբերյալ տեղեկատվության ստացումը, քանի որ դա ի հայտ է գալիս որոշակի ժամանակահատվածից հետո, մինչդեռ գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները պետք է ներկայացվեն յուրաքանչյուր հաշվետու տարվա ավարտից հետո:

Նախորդ ժամանակաշրջաններում բյուջետային միջոցների հաշվին իրականացված կապիտալ ծախսերը պայմանավորում են ընթացիկ բյուջետային ծառայությունների որակը: Վերջինիս գնահատման խնդիրներից մեկը հաշվապահական հաշվառման և բյուջետային հաշվետվությունների կազմման գործող մեխանիզմն է: Ակնհայտ է, որ դրանց հիման վրա անհնար է ծախսերի արդյունավետության իրատեսական գնահատումը: Այս առումով, անհրաժեշտ է կառավարչական հաշվառման համակարգի մշակում, որ ենթադրում է ծախսերի գնահատում ինչպես արդյունավետության, այնպես էլ արտադրողականության և խնայողականության տեսանկյունից: Այդպիսի մոտեցումն, իր հերթին, պահանջում է համապատասխան տեղեկատվություն գործունեության տարբեր ուղղություններով կատարված ծախսերի վերաբերյալ:

Բյուջետային ծառայությունների որակի բարելավման համար անհրաժեշտ է մշակել ծախսերի հաշվառման և դրանց արդյունավետության գնահատման համակարգ: Ներկայումս գոյություն ունի «հանուն ցուցանիշի» գործելու և գործունեության մյուս ոլորտներն աչքաթող անելու վտանգը: Պետական ծախսերի կառավարման համակարգում արդյունավետության ցուցանիշների ներառումն առաջացնում է մտավախություն, որ գործունեությունը կկենտրոնացվի հիմնականում այն ուղղություններով, որոնք այս կամ այն կերպ առնչվում են սահմանված ցուցանիշների ձեռքբերմանը: Գնահատման ոչ համարժեք համակարգի առկայության, ինչպես նաև ոչ համապատասխան ցուցանիշների ընտրության դեպքում առկա է բյուջետային ծառայությունների որակի անկման վտանգ, եթե անգամ առաջադրված նպատակներն իրագործվել են:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ բյուջետային ծառայությունների որակի բարձրացման գործում էական դեր կարող է ունենալ ըստ արդյունքների բյուջետավորումը: Դա պետական ծախսերի համակարգի բարեփոխումների կարևոր ուղղություններից է և ենթադրում է միջնաժամկետ բյուջետային պլանավորման համակարգի զարգացում, բյուջետային ծախսերի վերահսկողության մեխանիզմի կատարելագործում, բյուջետային ֆինանսավորում ստացող մարմինների գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացում և այլն: Ըստ արդյունքների բյուջետավորման մոդելի

<sup>2</sup> Տե՛ս **Վ. Բոստանջյան**, Հայաստանի Հանրապետությունում բյուջետային ծախսերի կառավարման հիմնախնդիրները, Եր., Տարեգիրք-2011:

կիրառման հիմնական շարժառիթներից մեկն այն է, որ այս դեպքում ստեղծվում են հնարավորություններ արդյունավետ կերպով բաշխելու բյուջետային ռեսուրսները միմյանց հետ «մրցակցող» ծախսային հոդվածների միջև: Դա ձեռք է բերվում համապատասխան բյուջետային ծրագրերի իրականացման արդյունքների վերաբերյալ հստակ և ամբողջական տեղեկատվության շնորհիվ: Հարկ է նկատի ունենալ նաև, որ բյուջետավորման այս մոդելը չի լուծում համապատասխան ռեսուրսների օպտիմալ բաշխման խնդիրը, այլ ընդամենը անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում դրա համար՝ հիմնականում շեշտադրելով բյուջետային ռեսուրսների հատկացումից ակնկալվող վերջնական արդյունքները:

Այն երկրներում, որտեղ բյուջեները կազմվում են ծախսային մեթոդով, ըստ էության, օգտագործվող միջոցների և ստացվող արդյունքների միջև չի ապահովվում անհրաժեշտ կապ: Այս առումով, ըստ արդյունքների բյուջետավորումն էականորեն տարբերվում է նախորդից, քանի որ հիմնական թիրախը մարտավարական և ռազմավարական նպատակների ձեռքբերումն է և պետական կառավարման մարմինների գործունեության սոցիալ-տնտեսական արդյունքների ապահովումը, ինչն իրականացվում է բյուջետային միջոցները համապատասխան ծրագրերի միջև բաշխման ճանապարհով:

Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին տարբեր երկրներում հետևողական աշխատանքներ են կատարվում բյուջետային բարեփոխումների և բյուջետավորման նոր մոդելների կիրառման ուղղություններով, այդուհանդերձ, դեռևս գոյություն չունի միասնական մոտեցում ըստ արդյունքների բյուջետավորման մոդելի ներդրման և արդյունավետ կիրառման առումով: Այդ ուղղությամբ ցանկալի արդյունքների հասնելու համար պետք է առանձնացնել մի քանի խնդիրներ, որոնց լուծումը, մեր կարծիքով, կունենա կարևոր նշանակություն տվյալ մոդելի հաջող ներդրման և կիրառման համար: Մասնավորապես՝ անհրաժեշտ է.

- պետական կառավարման համակարգի բարեփոխումներ իրականացնել բյուջետային պլանավորման զարգացման հետ կապված խնդիրների լուծման միասնական համալիրում,
- ծրագրանպատակային մոտեցումների կիրառման համար պետք է ստեղծել համապատասխան միջավայր՝ ապահովելով բյուջեի կատարման անհրաժեշտ կարգապահություն և պատասխանատվություն,
- հաշվի առնել երկրի, ինչպես նաև գործունեության տվյալ տեսակի առանձնահատկությունները և, դրանցով պայմանավորված՝ ոչ ստանդարտ մոտեցումների կիրառման անհրաժեշտությունը,
- ապահովել գործընթացի մասնակիցների մասնագիտական բարձր որակավորում,
- նախապես ձևավորել համապատասխան ինստիտուցիոնալ և օրենսդրաիրավական բազա:

Հարկ է նշել, որ ըստ արդյունքների բյուջետավորման մոդելի ներդրումը կապված է որոշակի բարդությունների հետ, որոնցից նշելի են բյուջետային հիմնարկների գործունեության սոցիալ-տնտեսական արդյունքների գնահատման և նպատակային արդյունքների ձեռքբերման աստիճանը բնութագրող ցուցանիշների միասնական համակարգի մշակման դժվարությունները, ծրագրերի կառուցվածքի և ֆինանսական հաշվետվությունների տարբերու-

թյունը, ոչ բավարար տեղեկատվական ապահովվածությունը, հաշվառման համակարգի անկատարությունը, արդյունքների գնահատման և մշտադիտարկման ցածր արդյունավետությունը և այլն:

Ըստ արդյունքների բյուջետավորման մոդելի պայմաններում բյուջետային հիմնարկներն իրենց հայտերում պետք է արտացոլեն նպատակների իրագործման և դրանցից բխող խնդիրների լուծման գործառնություններն ու ուղիները, ինչպես նաև ակնկալվող արդյունքները: Ընդ որում, մարտավարական և ռազմավարական նպատակների տարանջատումից բացի, բյուջետային հայտերում պետք է ներկայացվի նաև չափորոշիչների և ցուցանիշների այն համակարգը, որն անհրաժեշտ է մշտադիտարկման և նպատակների իրագործման աստիճանի գնահատման համար:

Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման և բյուջետային գործընթացի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է.

- կատարել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների հստակ տարանջատում և սահմանել պատասխանատվության գործուն մեխանիզմներ,
- ռազմավարական և բյուջետային պլանավորումների միջև հաստատել իրական կապ, որոշել բյուջետային ծախսերից սպասվող արդյունքները և իրականացնել այդ գործընթացի մշտադիտարկում,
- սահմանել բյուջետային ծառայությունների մատուցման և պետական գործառնությունների իրականացման հստակ կարգեր և ակնկալվող արդյունքների որոշակի մակարդակներ,
- բարձրացնել պետական կառավարման արդյունավետությունը և ընդունվող որոշումների հիմնավորվածության մակարդակը,
- մեծացնել պետական իշխանության մարմինների գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

Նշված խնդիրների լուծումն, իր հերթին, ենթադրում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կազմակերպման համակարգված սկզբունքների սահմանում, ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրում, երկարաժամկետ բյուջետային պլանավորման իրականացում, պետական ծառայությունների մատուցման որակի բարձրացում, ֆինանսական վերահսկողության համակարգի կատարելագործում, պետական գնումների համակարգի բարելավում և այլն:

Տնտեսության երկարաժամկետ կայունության ապահովումը յուրաքանչյուր երկրի զարգացման կարևոր խնդիրներից է: Այս առումով, կանխատեսելի և հիմնավորված բյուջետային քաղաքականության իրագործումը մակրոտնտեսական կայունության հասնելու լավագույն միջոցներից է, որը ստեղծում է անհրաժեշտ պայմաններ կայուն տնտեսական աճի ապահովման, ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման, նոր աշխատատեղերի ստեղծման և տնտեսության զարգացման տեսանկյունից շատ այլ կարևոր ու հրատապ խնդիրների լուծման համար: Ակնհայտ է, որ մակրոտնտեսական անկայունությունը, հանգեցնելով տնտեսական աճի տեմպերի անկման և պետական ֆինանսական միջոցների կրճատման, վտանգում է ոչ միայն նախատեսված նպատակների իրագործումը, այլև պետական կարևոր այլ գործառնությունների իրականացումը: Ուստի, սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունների և նպատակների սահմանման ժամանակ պետք է հաշվի առնել

առկա հնարավորությունները՝ բյուջետային տարբեր ծրագրերի իրագործումը չվտանգելու համար:

Հարկ է նշել, որ հաճախ օրենսդրական ակտերով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման տարբեր մարմինների, ինչպես նաև բյուջետային հիմնարկների վրա դրվում են որոշակի ծախսային պարտավորություններ, սահմանվում են նպատակներ և դրանց իրագործմանը նպատակաուղղված ծախսեր, որոնք ակնհայտորեն գերազանցում են երկրի ծախսային հնարավորությունները: Դրա անմիջական հետևանքներ պետք է համարել նախապես սահմանված նպատակների և ծրագրերի վերանայումը, ծախսերի սեկվեստրը, ծախսային պարտավորությունների իրականացման ժամկետների հետաձգումը, բյուջետային պարտքի առաջացումը և այլն, որոնք, անշուշտ, հանգեցնում են պետության նկատմամբ վստահության անկման: Նման իրավիճակում խիստ դժվարանում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության պլանավորումը, նվազում պատասխանատվության աստիճանը սահմանված նպատակներին և ցուցանիշներին հասնելու համար: Հետևաբար՝ բյուջետային գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով չափազանց կարևոր է հիմնարար սկզբունքներից բխող բյուջետային քաղաքականության իրականացումը, որոնցից հատկապես պետք է առանձնացնել հետևյալները.

- բյուջետային պլանավորման հիմքում դրվող տնտեսական կանխատեսումների և համապատասխան նախադրյալների իրատեսականությունը և հուսալիությունը,
- սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշների երկարաժամկետ կանխատեսումների վրա հիմնված բյուջեների ձևավորումը,
- բյուջետային պակասուրդի, պետական պարտքի, ինչպես նաև արտաքին պայմաններից կախված ծախսային պարտավորությունների սահմանափակումը,
- հարկային քաղաքականության արդյունավետությունը, կայունությունը, կանխատեսելիությունը և հարկային վարչարարության օբյեկտիվությունը,
- որոշակի ծախսատեսակների՝ համապատասխան եկամուտների աղբյուրների հետ ամրակցման բացառումը,
- սահմանված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ֆինանսական և այլ ռեսուրսների կանխատեսման ու հաշվառման ամբողջականությունը,
- ծախսային պարտավորությունների անվերապահ կատարմանն ուղղված բյուջետային հատկացումների պլանավորումը,
- անհրաժեշտ եկամտային աղբյուրների առկայության դեպքում միայն ծախսային նոր պարտավորությունների ստանձնումը,
- բյուջետային համակարգում արտաքին և ներքին գործոններով պայմանավորված ռիսկերի գնահատումը և կառավարումը:

Բյուջետային ծախսերի, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության աստիճանի բարձրացման հիմնական գործիք կարող է դառնալ ծրագրանպատակային սկզբունքների կիրառման միջոցով ռազմավարական զարգացման ծրագրի մշակումը և իրականացումը: Վերջինս պետք է ներկայացնի



պետական կառավարման մարմինների կողմից սեփական իրավասությունների և առկա բյուջետային ռեսուրսների շրջանակներում իրականացվող միջոցառումների համալիր՝ ուղղված սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական նպատակների իրագործմանը: Ընդ որում, ցանկալի արդյունքների հասնելու համար բյուջետային ծրագիրը մշակելիս անհրաժեշտ է.

- ելնել սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ նպատակներից, դրանց հասնելու համար ընտրված ուղղությունների առանձնահատկություններից և սահմանված չափորոշիչներից,
- կատարել ծրագրերի արդյունավետության գնահատում՝ ըստ վերջնական արդյունքների, երբ արժևորվում է արտաքին սպառողների պահանջումների բավարարումը, և, ըստ անմիջական կատարողի, երբ գնահատվում են մատուցվող պետական ծառայությունների ծավալը և որակը,
- ապահովել ծրագրերի իրագործմանն առնչվող պետական կառավարման համակարգի ենթակայության տակ գտնվող բյուջետային ֆինանսավորում ստացող կազմակերպությունների, ինչպես նաև բյուջետային եկամուտների հավաքագրման և ծախսային քաղաքականության իրականացման համար կիրառվող գործիքների ներառումը համապատասխան նպատակներին հասնելու գործընթացում,
- մշակել համապատասխան գերատեսչական ենթածրագրեր, որոնցով կսահմանվեն բյուջետային պլանավորման և ռեսուրսների օգտագործման հիմնական ուղղությունները և կապահովվեն մատուցված բյուջետային ծառայությունների արդյունքներն ըստ անմիջական կատարողների,
- ընդունել վերջնական և անմիջական արդյունքների հասնելու պատասխանատու մարմինների որոշումները՝ օժտելով նրանց համապատասխան իրավասություններով,
- կատարել երկարաժամկետ և գերատեսչական ծրագրերի արդյունավետության պարբերական գնահատում վերջիններում, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան փոփոխություն, ինչպես նաև դրանց ոչ արդյունավետ իրագործման դեպքում սահմանել պատասխանատվություն:

Նշված խնդիրները գործնականում լուծելու համար անհրաժեշտ է հաստատել գերատեսչական ծրագրերի մշակման, իրականացման և արդյունավետության գնահատման կարգը, սահմանել գերատեսչական նպատակային ծրագրերի ցանկը, որոնք, անշուշտ, պետք է ձևավորված լինեն ակնկալվող արդյունքների և դրանց գնահատման չափորոշիչների հիման վրա: Ընդ որում, այդ ծրագրերը պետք է ուղղակիորեն ապահովեն երկարաժամկետ ծրագրով նախատեսվող վերջնական արդյունքներ:

Կատարված վերլուծությունում դիտարկված մոտեցումներն ու արված առաջարկությունները, ըստ էության, կրում են հայեցակարգային բնույթ և, անկասկած, չափազանց կարևոր են Հայաստանում բյուջետային ծախսերի արդյունավետության մեծացման համար: Միաժամանակ, պետք է նշել, որ այդ նպատակին հասնելու համար հանրապետությունում ներկայումս առկա են իրավական բնույթի տարբեր խոչընդոտներ, որոնք որոշակիորեն նվազեցնում են ինչպես բյուջետային գործընթացի, այնպես էլ պետական ծախսային քաղաքականության իրականացման արդյունավետությունը: Դրա մե-

ծացման, ինչպես նաև բյուջետային վերահսկողության բարելավման համար անհրաժեշտ է մշակել բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման մեթոդաբանություն, որում պետք է հստակ արտացոլվեն համապատասխան չափորոշիչներն ու ցուցանիշները, ինչպես նաև դրանց օգտագործման մոտեցումներն ու մեխանիզմները: Առավել ևս, որ բյուջետային ծախսերի արդյունավետության սկզբունքի պահպանման անվերապահության մասին դրույթն ամրագրված է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքում, ըստ որի բյուջեների կազմման և կատարման ժամանակ պետք է ելնել նախատեսված արդյունքի ձեռքբերման համար բյուջետային միջոցների նվազագույն ծավալի օգտագործման կամ բյուջեով նախատեսված միջոցների ապահովման անհրաժեշտությունից<sup>3</sup>:

Ամփոփելով կարելի է եզրահանգել, որ վերոհիշյալ քայլերի կենսագործման և համապատասխան հարկաբյուջետային քաղաքականության իրականացման արդյունքում կստեղծվեն կարևոր նախադրյալներ Հայաստանի Հանրապետությունում բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման և սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթ նպատակների իրագործման համար:

---

<sup>3</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք:

**ВАРДАН БОСТАНДЖЯН**

*Профессор кафедры „Финансового учета” ЕГУ,  
доктор экономических наук*

**ГЕВОРГ КИРАКОСЯН**

*Доцент кафедры „Финансового учета” ЕГУ,  
кандидат экономических наук*

**МАРИАМ АВЕТИСЯН**

*Эксперт постоянной комиссии по экономическим  
вопросам НС РА, кандидат экономических наук*

**Проблемы повышения эффективности бюджетных расходов в Республике Армения.**– Статья посвящена вопросам повышения эффективности бюджетных расходов. В данной работе были исследованы характеристики бюджетного процесса, проанализированы социально-экономические задачи развития, а также оценены проблемы реализации рационального использования бюджетных ассигнований. В статье определены факторы, негативно влияющие, на эффективность бюджетных расходов и предложены способы их преодоления. Рекомендации могут быть использованы при подготовке осуществления бюджетного процесса и в ходе подготовки заявок по бюджету.

**Ключевые слова:** бюджетная система, бюджетный процесс, бюджетные расходы, программное бюджетирование, эффективность бюджетных расходов, приоритетные цели, бюджетирование, ориентированное на конечные результаты.  
JEL: H50, H59, H61, H69, H72

**VARDAN BOSTANJYAN**

*Professor at the Chair of “Financial Accounting” at YSU,  
Doctor in Economics*

**GEVORG KIRAKOSYAN**

*Associate Professor at the Chair of  
“Financial Accounting” at YSU, PhD in Economics*

**MARIAM AVETISYAN**

*Expert of Standing Committee on Foreign Relations  
of NA of the RA, PhD in Economics*

**Problems of Increasing Efficiency of Budget Spending in the Republic of Armenia.**– The article touches upon the issues of increasing the efficiency of budgetary spending. In this paper we have investigated the characteristics of the budget process, analyzed the socio-economic development objectives, as well as estimated the implementation problems of rational use of budgetary allocations. The article defines the factors adversely affecting the efficiency of budget spending and suggests ways to overcome them. The recommendations can be used in the preparation of the budget process and budget applications.

**Key words:** budget system, budget process, on-budget expenditures, programme budgeting, effectiveness of on-budget expenditures, priority goals, result-oriented budgeting.  
JEL: H50, H59, H61, H69, H72